«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Ուսուցչի համագործակցությունը գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեությանարդյունավետության բարձրացման նպատակով

ՀԵՂԻՆԱԿ՝ Սյուզաննա Հովսեփյան

ԽՈՒՄԲ / ԱՌԱՐԿԱ՝ 4-րդ/ Հասարակագիտություն

Սևան 2023

Բովանդակություն

Ներածություն..... **3**
Մանկավարժական օրինակելի փորձի փոխանակումը դպրոցում որպես ուսումնադաստիարակչական գործընթացի համագործակցության շրջանակներում..... 6
Դասալսումը որպես ուսումնական գործընթացի որակի բարձրացման և կատարելագործման մեխանիզմ..... 10
Դասի օրինակելի պլան պատմության դասաժամերին ՈՒՀՁ ձևաչափով..... 17
Ուսուցիչների կողմից փոխադարձ դասավանդման ընթացքում օգտագործված տարբերակված ուսումնառություն ձևավումը դասապրոցեսին..... ... 20
Առարկայական մասնախմբերի ստեղծումը որպես ուսուցիչների համագործակցության ու փոխօգնության հարթակ. 23
Համացանցային մանկավարժական համայնքների ձևավորումը, որպես մանկավարժական փորձի փոխանակման միջոց 26
Եզրակացություններ. 29
Առաջարկություններ. 31
Օգտագործված գրականության ցանկ. 32

Ներածություն

Արդի ժամանակներում հաճախ է պահանջվում տարբեր բնագավառների ուսուցիչների համագործակցային գործունեությունը: Ժամանակակից դպրոցները միտված են կրթել նոր չափորոշչահեն պահանջներին համահունջ սերունդ որը կկարողանա առօրյաում, աշխատանքում ինքնուրույն դատողություններ, եզրահանգում,դիրքորոշում հայտնել իր ստացած գիտելիքները կիրառելի դարձնել, դրա հիմքում պետք է ուսուցչական համայնքը մեծ ջանքեր գործադրի սովորողների մոտ ձևավորել կարողունակություններ, մոտիվացիա և սոցիալ –հուզականություն, այդ թվում նաև վարքագիծ ,որպեսզի սանը մրցունակ լինի նաև այլ երկրներում, իր համոզմունքների հմտությունների շրջանակը համապատասխանի իր և պետության շահերի համագործակցությանը:Արդի դպրոցը այդ թվում նոր չափորոշիչների ներդրումը դպրոցներում պահանջում են ունենալ այնպիսի մանկավարժական հաակազմ, ով իր մասնագիտական որակների շնորհիվ կարողանում է հարստացնել ուսուցման և դաստիարակության մեթոդները, ավանդական մեթոդների կողքին լայնորեն կիրառել ժամանակակից փոխներգործուն մեթոդները: Այս հրամայականն իր հետ բերել է նոր, ժամանակի պահանջներին համապատասխան որակի կրթություն ունենալու ձգտումը: Իսկ արդյոք ուսուցչի ինքնակրթությունը բավարար է, որպեսզի վերջինս համապատասխանի կրթական նոր պահանջներին: Սա հարց է, որն հաճախ լսելի է ուսուցչական համայնքում: Կարող ենք վստահաբար ասել, որ ուսուցչի համար գործընկերների հետ համագործակցությունը խիստ կարևոր նշանակություն ունի: Օրինակելի փորձը, որը սկսնակ ուսուցիչը կարող է վերցնել ավագ ու փորձառու գործընկերներից, մեծապես նպաստում է, որպեսզի ուսուցիչն արդեն գործնականում պատկերացում կազմի այս կամ այն խնդրո առարկայի վերաբերյալ: Ուստի սովորել սովորեցնելով բանաձևն այստեղ լայն կիրառելի է: Այն ուսուցիչները, ովքեր ավելի փորձառու են, տեղեկացված են ավելի հետաքրքիր, արդյունավետ և համարձակ դասավանդման մեթոդներին: Ուսուցիչները վիճակի են կազմել և ընտրել դասավանդման այնպիսի մեթոդներ և միջոցառումներ, որոնց

միջոցով համապատասխանաբար զարգացվում են աշակերտների արժեքները, գիտելիքը, դիրքորոշումը, ըմբռնումը և հմտությունները: Ստացվում է,որ օրինակելի փորձի փոխանակումը կարող է մոտիվացնել սկսնակ, ուսուցիչներին ամեն կերպ գտնել ճանապարհներ նոր հմտություններ ու կարողությունների ձեռքբերման համար: Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ ուսուցիչները համագործակցությունը, օրինակելի փորձի փոխամակումն ու փոխանցումը միտված է ուսումնական գործընթացն ավելի հարուստ, բովանդակային ու արդյունավետ դարձնելուն: Համագործակցային գործընթացում ուսուցիչների քննարկումները, կրթական նոր եղանակների վերլուծությունը,խնդրահարույց իրավիճակներից ելքերի որոնումը միտված է մեկ ընդհանուր նպատակի՝սովորողի համար դասը դարձնել հետաքրքիր, գործնականում կիրառելի,դիտակտիկ, ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցված , որը միտված կլինի ունենալ առողջ ,մրցունակ , կրթության որակ:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Ցանկացած միջավայրում համագործակցային առողջ մթնոլորտը, որը հենված է առողջ համագործակցության, փոխոգնության ու օրինակելի փորձի փոխանցման վրա, անշուշտ խրախուսելի է Այդպես է նաև կրթական համակարգում: Առողջ ու արդյունավետ գործընկերային միջավայրի հիման վրա հնարավորություն է ընձեռվում հասնել հաջողությունների մասնագիտական զարգացման աճ գրանցել: Այդ հանգամանքով է պայմանավորված թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը: Կրթական արդյունքի նոր հարացույցի ձևավորումը ,նպատակների և խնդիրների փոփոխությունը կոչված են ապահովելու մարդու մուտքը սոցիալական աշխարհը,նրա սոցիալական մրցունակությունը և մասնագիտական արդյունավետ գործունեությունը,որը էլ իր հերթին նոր պահանջ է ներկայացնում մանկավարժներին տիրապետելու մասնագիտական,հաղորդակցական,առարկայական կոմպետենցիաներին,ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու մասնագիտական գործունեությանը:Ցույց տալ ուսուցչների արդյունավետ

փոխգործակցության կարևորությունը ուսումնական գործընթացն էլ ավելի որակյալ ու հասանելի դարձնելու առումով:

Հետազոտության խնդիրը: Կրթական բարեփոխումների համատեքստում առաջատար խնդիր է համարվում ուսուցչի մասնագիտական կրթության որակի բարձրացումը,ուսուցչի,ով արագ կներգրավվի նոր փոփոխությունների մեջ,և ստեղծագործաբար կկատարելագործի ուսումնադաստիարակչականգործընթացում,համապատասխանելով ժամանակի պահանջներին,և կրթական պահանջներին:Ձևակերպել այն արդյունավետ եղանակներն, որոնց միջոցով ուսումնական հաստատությունում գործընկեր ուսուցիչների միջև տեղի է ունենում համագործակցություն, փորձի փոխանակում:1

Մանկավարժական օրինակելի փորձի փոխանակումը դպրոցում որպես ուսումնադաստիարակչական գործընթացի համագործակցության շրջանակներում.

Արդյունավետ համագործակցությունը կարող է ունենալ բազմաթիվ ձևեր, բայց արդյունքների հանգեցնող մեկ հիմնական ցուցանիշը ընդհանուր նպատակն է: Երբ բոլորը գիտեն, թե ինչի համար են աշխատում, հստակ տեսլականով, թե ինչի պետքէ հասնի վերջնական արտադրանքը, մնացած ամեն ինչը կարող է իր տեղը ընկնել: Թիմերի համար համախմբվածություն ստեղծելու համար յուրաքանչյուր անդամ պետք է իր հետ սեղանի շուրջ բերի ինչպես միջանձնային, այնպես էլ տեխնիկական հմտությունների մի շարք ՝ միաժամանակ ունենալով ինքնագիտակցություն ՝ շարունակաբար վերահաստատելու իրենց ներդրումն ու արդյունքը թիմին աջակցելու համար: Ժամանակակից հասարակությունների գլխավոր խնդիրներից մեկը դարձել է կայուն զարգացումը, իսկ դրան հասնելու ճանապարհին փոփոխությունների վճռորոշ գործոնն, անշուշտ, կրթությունն է: Կրթությունը՝ հանուն կայուն զարգացման, դարձել է արդի կրթական համակարգերի բարեփոխման գլխավոր ուղենիշը: Այս համատեքստում որպես առաջնահերթություն է դառնում թե' ուսուցման գործընթացի հիմնական պատասխանատուների՝ ուսուցիչների, թե' առաջնային շահերց է բխում՝ սովորողների դերի համարժեք կարևորումը:Կրթության (ուսուցման և դաստիարակության) հարացույցի փոփոխությունը ենթադրում է.

- Մանկավարժական հարաբերությունների վճիշտ դասակարգում դեպի սովորողի անձը՝ հաշվի առնելով վերջինիս ներուժի և մարդկության պատմամշակութային լավագույն նվաճումների հարաբերակցությունը.
- Սովորողի ինքնավստհության ձևավորում, սեփական անձը կարևորելու, ստեղծագործական կարողունակությունների բացահայտում և արժևորում:
- Սովորողի մոտ զարգացնել, ստեղծագործական կարողություններ, քննադատական մտածողություն.

- Սովորողների ճանաչողական գործունեության կառավարում: Միաժամանակ ուսուցման համակարգը ենթադրում է սովորողի տարիքային, անհատական-հոգեբանական (դրդապատճառներ, հետաքրքրություններ) և ազգային առանձնահատկությունների առավելագույն հաշվառում և նրա պահանջմունքների բավարարում.[2] :

Կրթության պահանջների բնականոն իրականացումը մեծապես պայմանավորված է ուսուցչի աշխատանքից, որքան բարձր են վերջինիս մասնագիտական ու մարդկային որակները, ինքնազարգանալու, նորը սովորելու ցանկությունը, այդքան ուսուցիչը շատ բան ունի տալու մատաղ սերնդին: Բոլոր ուսուցիչներն իրենց աշխատանքային գործընթացում և մասնագիտական զարգացման ընթացում պետք է կարողանան հաշվի առնել իրենց առարկաների հիմքը, դրսևորել քննադատական մոտեցում, կապել այլ ոլորտների և բնագավառների, ինչպես օրինակ՝ քաղաքացիության հետ, և հետազոտել դրանց սոցիալական ծառայությունը, ժամանակակից մշակույթի հետ դրանց փոխհարաբերությունը, որպես համընդհանուր արժեք՝ խթանել հանդուրժողականությունը, հավասարության խնդիրները, բազմազանությունը և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը: Ուսուցիչների միջև մանկավարժական օրինակելի փորձի փոխանակումը կարելի է դիտարկել ուսումնադաստիարակչական գործընթացի ավելի արդյունավետ կազմակերպման համատեքստում: Այս առումով կարևոր ենք համարում նորարար ու նախաձեռնող ուսուցիչների դերը: Վերջիններս պետք է բաց լինեն համագործակցության համար, փորձեն ուղղորդել գործընկերներին: Մանկավարժական աշխատողն իրավունք ունի համագործակցել գործընկերների հետ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով:2. Փորձի արդյունավետ փոխանակումը և համագործակցությունը դպրոցում կախված է ոչ այնքան ուսուցչի մաստագիտական, որքան անձնայինորակներից:

2. https://aspu.am/website/images/old/upload/file/Hayecakargh.pdf ՀՊՄՀ,Մանկավարժական կրթության զարգացման հայեցակարգ, Երևան, 2014, էջ 11:

Ուսուցչի անձնային որակներից են.

- Մասնագիտության արժևորում։
- Մոտիվացիա դեմ հանդիման կանգնելու մարտահրավերներին
- Ժամանակի պլանավորում
- Համայնքային խնդիրների վերհանում
- Համբերություն, օբյեկտիվություն։
- Ճիշտ քաղաքացի դաստիարակելու կարողունակության սերմանում
- Հարգանք,ինքնավստահություն։
- Մշտապես ինքնակրթությամբ և ինքնակատարելագործմամբ զբաղվելու գիտակցություն և մասնագիտական ու ընդհանուր զարգացումը պլանավորելու և իրականացնելու կարողություն։3.

Կրթական միջավայրի մարտահրավերները կառավարելու, մասնագիտական կոմպետենցիաները զարգացնելու, ուսուցման տարբեր ռազմավարություններ մշակելու և իրականացնելու ժամանակ շատ կարևոր է համագործակցային միջավայրի ստեղծումը գործընկեր ուսուցիչների համար: Ուստի ուսուցիչներին պետք է միավորի փոխադարձ վստահությունը, թիմային համերաշխությունը, միմյանց աջակցելու ազնիվ մղումն ու պատրաստակամությունը։ Աշխատանքային միջավայրում յուրաքանչյուր ուսուցիչ պարտավոր է պաշտպանել ոչ միայն իր, այլև գործընկերոջ հեղինակությունը։ Նա չպետք է նսեմացնի գործընկերներին սաների կամ այլ անձանց ներկայությամբ։ Համագործակցային հարաբերություններում կարևոր է նաև քննադատական մտածողությունը, սակայն քննադատությունը և դիտարկումը պետք է լինի անաչառ և հիմնավոր, կառուցողական, տակտի զգացումով, բարյացակամ և ոչ վիրավորական։ Հետադարձ կապը պետք է տրվի դրական միտումներով ուսուցչի և դրական և բարելավման կողմերը բացահայտելու համար ,որը միտված կլինի հետագայում ավելի լավ դաս պլանավորելու և իրականացնելու համար։ Մանկավարժական աշխատողը պարտավոր է պահպանել ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջները[3]։

Այսպիսով, նպատակ ունենալով հիմնավորել ուսուցիչների համագործակցության ու փորձի փոխանակման կարևորությունը դպրոցում, նշենք նաև, որ անչափ կարևոր է, որպեսզի ուսուցիչը չկաշկանդվի համագործակցության կամ փորձի փոխամակման ժամանակ:

3. https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀհանրակրթության մասին օրենք

Դասալսումը որպես ուսումնական գործընթացի որակի բարձրացման և կատարելագործման մեխանիզմ.

Դասալսման նպատակն է ուսուցչի և գնահատման ժամանակակից փորձի մասին տեղեկության ձեռք բերումն է: Դասալսման ժամանակ գնահատողը պետք է հետևի ոչ միայն ուսուցչի փորձին,նա արդյոք պլանավորում է դասը ունի մշակված դասի նպատակ,վերջնարդյունք,ներառել է խաչվող հասկացություններ, ռազմավարություն պատմության դասաժամերին,այդ թվում նաև գնահատման ճկուն ռազմավարություն,պատրաստի ռուբրիկներ,անհրաժեշտ ուսումնական պաշարներ,այլ նաև ձևավորի պատմության դասաժամերին արժեհամակարգ, քննական մտածողություն, արժեք և վերաբերմունք, ազատ արտահայտվելու իր դիրքորոշումը կարծիքը հիմնավորելու ,եզրահանգումներ անելու մշակույթ ինչը պահանջում է մեր նոր կրթական համակարգը,ըստ ՀՊՉ-ի վերջնարդյունքների և ութ կարողունակությունների:Դասալսումներին պետք է մոտենալ ըմբռնումով քանի որ այն հնարավորություն է ընձեռում բացահայտել նաև սաների կարողունակությունների ,ուղղորդել ուսուցչին, սեփական փորձի օրինակով կիսվել տարբեր ռազմավարություններ, մոտեցում, մեթոդ հնարների օգտագործումը որը պատմության դասաժամերին սովորողին ոչ միայն կտրվի գիտելիք այլ հմտություն,ինչպես սովորել, համագործակցել թիմակիցների հետ և արժևորել սեփական կարծիքը:Դասալսման միջոցով նաև ուսուցիչները բացահայտում են սեփական ուժեղ և թույլ կողմերը ,որը հնարավորություն է տալիս բարելավել, ավելի արդյունավետ դասաժամը վարել և հասնել սահմանված վերջնարդյունքին:Ցանկացած դասալսում այդ թվում նաև փոխադարձ դասալսում նախ և առաջ պետք է լինի համաձայնեցված,ունենա կարևոր շարժառիթ և կոնկրետ թիրախային նպատակ, ինչու եմ դասալսում, որն է դասալսման նպատակը, ինչ խնդիրներ եմ վեր հանելու, ինչպես կարող եմ աջակցել , և դրական հետադարձ կապը:Փոխադարձ դասալսումները միտված են բացահայտելու ուսուցչի նոր հմտությունները, ինքնակրթվելու և առաջին հերթին ուսուցիչը պետք է բաց լինի նոր մարտահրավերներին և կարողանա իր ճկուն մտով հաղթահարել

դրանք։ Դրանք հնարավորություն են ստեղծում առաջավոր փորձի ընդհանրացմանը, տարածման համար,ստեղծում են արդյունավետ համագործակցություն ուսուցիչների հետագա գործունեության միջև,ամուր ուսուցչական համայնքի ներդրումը բերում է նաև առողջ սերունդ դաստիարակելուն որը կկարողանա հանդիման դուրս գալ մարտահրավերներին կյանքի բոլոր ասպարեզներում և լինել մրցունակ սան։Ուսուցիչը ուսումնական գործունեության ընթացքում դրսևորում է անսպառ հետաքրքրասիրություն։ Փոխադարձ դասալսումներ ժամանակ ուսուցիչների մոտ ծնվում է նոր գաղափարներ ,պատկերացումներ վերարտադրելու կիրառելու մանկավարծական գործունեության ընթացքում, բաց լինել նաև համայնքային խնդիրներին տալ լուծումներ ունենալ ակտիվ քաղաքացի, լավ առաջնորդական որակներ սերմանել սովորողների մոտ պատմության ,հասարակագիտության դասաժամերին տանել նաև կապը այլ հարակից առարկաների հետ տալով այդ ծնված մտեքին ստեղծագործական գործունեություն որը կիրառելի կլինի պատմության դասաժամերին։Այս ամենը միտված է բարձրացնել ուսուցչի դասավանդման որակը։

Սկզբունքներ փոխադարձ դասալսումների և ուսուցիչների համագործակցության վերաբերյալ։

- ✓ 1.բարիդրացիական- նախօրոք ուսուցչին տեղյակ պահել այդ մասին բարեկրթության կանոններով.
- ✓ 2.դասալսման ընթացքում ավելի շատ նկատել դրականը-դրական տրամադրվածությունը
- ✓ 3.գործնական հաղորդակցություն-քննարկելով դասը, այն պետք է ոչ թե քննադատել, այլ վերլուծել.
- ✓ 1.բարիդրացիական- նախօրոք ուսուցչին տեղյակ պահել այդ մասին բարեկրթության կանոններով.
- ✓ 2.դասալսման ընթացքում ավելի շատ նկատել դրականը-դրական տրամադրվածությունը.

- ✓ 3.գործնական հաղորդակցություն-քննարկելով դասը, այն պետք է ոչ թե քննադատել, այլ վերլուծել.

Կիսվելով սեփական փորձով որը իրականացրել ենք ,բազում դպրոցների ուսուցիչների հետ պատմության ,հասարակագիտության դասաժամերին, այն ունեցել է դրական միտում հետագա դասերը պլանավորելու և արդյունավետ իրականացելու համար: Ինչու չէ նաև դասալսումների արդյունքում դու ինքտ էլ ես սովորում: Խորհուրդ կտայի կիրառեին պատմության դասաժամերին Աշխարհացույց կրթական հարթակը քանի –որ այն լայն հնարավորություն է ընձեռում ուսուցիչներին համաժամանակյա օգտագործման դնել սովորողների հետ, արդի 21-րդ դարի կարողունակությունները միտված են բացահատելու սովորողների կրթական որակները զարգացնել: հարթակը ունի դասեր որոնք քարտեզներով և բազու գործիքներով կիրառելի են , գործնականի ,նոր նյութի հարցադրումների, ինքնուրույնի դասի բոլոր փուլերի առումով: Նաև ունի իր մեջ ամփոփված ՏՀՏ գործիքներով պատրաստված խաղեր որը կարելի է կիրառել ամփոփման ամրապնդման ժամանակ:Պատմության վեց մտածողության հիմնասյունները.

- Պատմության կարևորությունը
- Շարունակականություն և փոփոխություն
- Պատմական տեսանկյուն
- Պատճառ և հետևանք
- Առաջնային աղբյուրների օգտագործում
- Բարոյական հարթություն.

Փոխադարձ դասալսումները որը ավելի տպավորից է եղել Կոտայքի մարզի դպրոցներց մեկի հետ, երբ պատմության դասաժամին բանավեճ քննարկումով վեր էին հանվում Հայկական հարցի հիմնական դրվագները, ցույց էին տրվում ծագման խնդիրը , քարտեզագրում և կապում այս օրվա վառ իրականության հետ: Հարգելի ուսուցիչներ իմ խնդրանքը յուրաքանչյուր թեմա մինչ բերեք իրական դաշտ ,կիրառեք ՏՀՏ գործիքներ, այն դասը ավելի դիդակտիկ և արդյունավետ է դարձնում, քիչ խոսեք կարճ նախադասությունները սաների ուշադրությունը սևեռում են դեպի

ձեզ , փորձեք օգտագործել Զնագնդի, Սարդոստայնի, Զույգվիր կիսվիր, Զիգսոնի, շրջված դասարանի, տարբերակված ուսուցում: Հետադարձ կապը միշտ սկսեք դրական մոտեցումով և սովորողին հորդորեք սովորել բարելաման կողմերը,ունեցեք նաև մշակված կանոններ, դասի բոլոր փուլերի համար:

Ստորև կներկայացնեմ դասալսման թերթիկը.

ԴԱՍԱԼՍՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Ամսաթիվ՝ .....

Մարզը՝ .....

դպրոցը՝..... Ուսուցիչը՝..

..... Առարկան՝

դասարանը՝ .....----------

Դասի թեման՝ .....

Դասալսման նպատակներն ու խնդիրները՝ ----------

Ներկա աշակերտների թիվը՝ ---------- բացակայում էին՝ ---------- որոնցից անհարգելի՝ -----

Դասի տիպը՝ .....

Դասապլանի առկայությունը՝ այո / ոչԿահավորանքը (ուսումնական նյութեր)՝ այո / ոչ

Աշակերտների դասագրքերով և տետրերով ապահովվածությունը՝ այո / ոչ

Դասի ընթացքը (դասի համառոտ բնութագիրը, տարբեր մասերի կենսագործումը և այլն)՝ .....

ա) անցած դասի ամփոփում.....

.....դիտողություններ՝ .....

բ) նոր դասի հաղորդում / դասի ընթացքում սահմանված վերջնարդյունքների զարգացում / ----------

---

դիտողություններ՝ .....

Սովորողների (այդ թվում՝ ԿԱՊԿՈՒ) ներգրավվածությունը դասապրոցեսում (շերտավոր աշխատանք աշակերտների հետ) ՝ ----------

----------Դասի ընթացքում օգտագործված մեթոդ(ներ)ը՝ ----------

Գործնական աշխատանքների արդյունավետ և նպատակային օգտագործումը՝ ------

---

----------Սովորողի գնահատումը (հիմնավորումը)՝

1. գնահատված աշակերտների թիվը՝ ----------
2. գերազանց՝ ----------
3. լավ՝ .....
4. բավարար ----------
5. անվավարար ----------
6. գնահատականների համապատասխանությունը պետական չափորոշիչների պահանջներին՝ .....

Տնային հանձնարարություն՝ .....

.....Անդրադարձ դասին՝ .....

Դասավանդող՝..... ստորագրությունը՝ .....

Դասալսող՝..... ստորագրությունը՝ .....

ԴԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹ

	ՉԱՓԱՆԻՇՆԵՐ				
	Դասի հիմնական նպատակներն ու խնդիրները հստակ են ձևակերպված				
	Դասի կառուցվածքային փուլերը տրամաբանորեն շաղկապված են				
	Դասին օգտագործվում են նպատակահարմար մեթոդներ, հնարներ և միջոցներ				
	Դասարանը ներգրավված է դասապրոցեսին				
	Սովորողների գիտելիքները խորն են, կայուն ու բազմակողմանի				
	Առաջադրանքները տրվում են հստակ, իսկ դրանց ստուգումը հետևողական է				
	ՈՒսուցանվող նյութը, հասկացություններն ու եզրույթները մատուցվում են պարզ ու մատչելի				
	Նորի հաղորդումը հիմնավոր է ու հետաքրքիր				
	ՈՒսուցիչը խթանում է սովորողների մտածողությունը, ուղղորդում նրանց գործունեությունը				
	Խրախուսվում են սովորողների ճանաչողական հետաքրքրասիրությունները				
	Խթանվում է սովորողի ինքնուրույն և տրամաբանական մտածողությունը				

	Ստեղծվում են ներառարկայական և միջառարկայական կապեր				
	Մեջբերումները տեղին են ու նպատակային				
	Դասը արդի է, օգտագործվում են ՏՀՏ-ներ				
	Ապահովվում է հետադարձ կապ				
	Օգտագործվում են գնահատման զանազան ձևեր, գնահատականները տեղին են ու հիմնավոր				
	Դասարնը կառավարվում է հմտորեն ու բարձր կուլտուրայով				
	ՈՒսուցչի խոսքը գրագետ է, լսելի , հասկանալի, նպատակամետ ու տրամադրող				
	Դասաժամն օգտագործվում է արդյունավետ ու նպատակային				
	Դասի պլանը համապատասխանում է արդի պահանջներին				

0-30 միավոր՝ շատ վատ, 31-40 միավոր՝ վատ, 41-60 միավոր՝ նվազ բավարար 61-70 միավոր՝ միջին, 71-80 միավոր՝ լավ, 81-90 միավոր՝ շատ լավ ,91-100 միավոր՝ գերազանց

Դասի օրինակելի պլան պատմության դասաժամերին ՈՒՀՁ ձևաչափով.

Քայլ 1

- Եկեք ծանոթանանք միմիյանց հետ, կպչուն թերթիկների վրա գրեցեք ձեր անունները և ձեր նախընտրած գույնը, և մեկ նախադասությամբ ներկայցրեք Ձեզ:
- Միասին եկեք սահմանենք դասարանային կանոներ և հետևենք դրան:
- Հարգենք, համագործակցենք միմիյանց հետ, ունենաք ժամանակի կառավարում, խոսենք շշուկով, չընդհատենք միմիյանց, լինենք հարգալից, լավ հարցադրումները պարտդիր են դասերի ժամանակ

Դասարան՝6-րդ

Թեման՝ Հին Հայաստանի մշակույթըՆպատակ և վերջնարդյունք. սովորողը ՝կկարողանա

Բացատրել երբ է սկզբնավորվել հայկական մշակույթը.

Ներկայացնի Հայկական մշակութայի ինչպիսի վկայություններ են մեզ հասել

Մեկնաբանի ինչ ենք հասկանում նյութական և հոգևոր մշակույթը

Պատմի ՝Արա Գեղեցիկի,Շամիրամի, Տորք Անգեղի, Արամի մասին

Դասի սկիզբ-5-րոպե: Եկեք գուշակենք,ինչի մասին է լինելու մեր այսօրվա թեման Ինչ եք տեսնում այս նկարում: Արդյոք երկու նկարների մեջ կան ընդհանուր գծերըստ ձեր պատկերացմամբ: Նկարներից որն է ավելի հոգեհարազատ Ձեզ .

Նոր նյութ՝ 15-ր Մեթոդ՝ Եթե ունենայի:

Սեղաններին դրված են շրջած թերթիկներ: Երբ ուսուցիչն ասում է՝ «Սկսեցինք», բոլորը վերցնում են սեղանին դրված թղթերը ևփորձում մեկնաբանել յուրովի:Աշակերտները գուշակում են, թե որն է լինելու դասի թեման:

«Եթե ունենայի հնարավորություն ապագայի անիվով հանդիպել Արա գեղեցիկին կամ Հայկ նահապետին, ինչպիսի խնդրանքով կդիմեիր և ում ավելի շատ

կնախընտրեիր նմանվել»։ Եկեք ունկընդրենք այս ձայնագրությունը որտեղ խոսվում է Արա Գեղեցիկի և Շամիրամի մասին

Ընկալման ստուգում

Ինչու Հայկ նահապետը սպանեց Բելին

Ինչպիսի ավանդազրույցներ է մեզ հասել։Ինչպես է դիցավեպը տարբերվում առասպելներից,արդյոք դրանք փոխլրացնում են մեկը մյուսին։

Գործնական աշխատանք՝15-ր

Մեթոդ՝Ես դու մենք։ Ուսուցիչը 1-2 հաշվով դասարանը բաժանում է խմբերի։ Շեշտում է, որ աշխատանքի ընթացքում կարևոր է լսել միմյանց։ Գնահատումը ռուբրիկով

Ուսուցիչը հրահանգում է՝

Ձեր առջև տեսնում եք թղթեր և ծրարներ։ Երբ կասեմ «Սկսեցինք», ծրարից հանում եք ։ Երբ կասեմ՝ «Ավարտ», դադարեցնում եք աշխատանքը։ Աշխատում եք շշուկով։ Ունեք 10 րոպե և հինգ ր ներկայացնելու համար

1-խումբ.Ներկայացրեք Աշխարհացույց հարթակով Հայկական մշակույթի մեզ հասած վկայությունները։ Բացատրելով պատկերեք և տարանջատեք ինչ եք հասկանում նյութական և հոգևոր մշակույթ ասելով.

2-խումբ.Աշխարհացույց հարթակի սույն նախանշված թեմայից դուրս գրեք Արա Գեղեցիկի նՇամիրամի,Հայկ Նահապետի մասին հուշագրավ դրվագներ և փորձեք ներկայացնել ,և վերջում հորինելով ձեր պատմությունը,և ամբողջը իմի բերելով պատմել.

3-խումբ.Ընդգծեք Աշխարհացույց հարթակում մատիտով այն վայրերը որտեղ խոսվում է Խաալդի, Թեշեբանի աստվածների գտնվելու մասին և ցույց տվեք.

Ընկալման ստուգում

Ի՞նչ եք անելու։

- Ինչպե՞ս եք աշխատելու։Ե՞րբ եք սկսելու։

- Ինչքա՞ն ժամանակ ունեք։Ուսուցիչը հրահանգում է՝

Խմբերից մեկական անդամ մոտենում են գրատախտակին, փակցնում իրենց աշխատանքները նմնում կանգնած, որպեսզի ներկայացնեն մյուս խմբերին։

Ինքնուրույն աշխատանք՝5-րոպե

Ինչպիսի վերաբերմունք կդրսևորեիք եթե դուք լինեիք Արա Գեղեցիկի փոխարեն, կընդունեիք մարտահրավերը թե կգնայիք փոխզիճման, ներկայացրեք հինգ նախադասությամբ տալով հիմնավորում եթե այո, ինչու,եթե ոչ ,ինչու։

Դասի ավարտ-5-րոպե

Անավարտ նախադասությունների մեթոդը Աշակերտները թերթիկների վրա գրում են՝

Ես այսօր սովորեցի ……

Ինձ դուր եկավ…..

Այս թեման կարևոր է, որովհետև ……

Կուզենայի հաջորդ դասին ……

վերջում եկեք գրենք թեստ օգտվելով աշխարհացույց հարթակի թեստ կոճակից։ Վերջում գրատախտակին նշվում է տնային հանձնարարությունը։ Գրել դասի վերջին հարցերը։

Ուսուցիչների կողմից փոխադարձ դասավանդման ընթացքում օգտագործված տարբերակված ուսումնառություն ձևավումը դասապրոցեսին.

Տարբերակված դասավանդումը և ուսումնառության համընդհանուր ձևավորումը հատուկ է հանրակրթական դպրոցի մանկավարժներին ծանոթ են տարբերակված ուսուցման գաղափարին: Այս ընդգրկուն հայեցակարգը ուսուցիչներին հնարավորություն է տալիս առանձին թեմաներ դասավանդելիս, մարտահրավերը հարմարեցնել սովորողների անհատական առանձնահատկություններին ցուցաբերելով տարբերակված ուսուցում, պատմության դասաժամերին: Տարբերակված ուսուցումը կիրառվել է աշխարհի տարբեր դպրոցների ներառական դասարաններում և հիմնված է Վիգոտսկու «Զարգացման մոտակա գոտու» (1978) տեսության վրա, ըստ որի սովորողները լավ են սովորում, երբ տրված հանձնարարությունները մատչելի են, ոչ թե շատ դժվար կամ պարզունակ: Քոֆմանը և Հալահանը (2011) այս մոտեցումը որակում են որպես տեղեկատվությանը «դժվարությամբ տիրապետելու մոտեցում», համաձայն որի, հանձնարարությունները պետք է լինեն դժվար, բայց ոչ խրթին:Տարբերակված ուսուցումը կարող է լինել ՈՒՀՁ գործընթացի մի մասը:ՈՒՀՁ-ի ուղղությամբ իրականացված հետազոտությունները վկայում են, որ որոշ սովորողների համար յուրացման չափանիշները կամ ակնկալիքները փոփոխելու անհրաժեշտությունը կարող է սակավ լինել, եթե դասավանդելիս կիրառվեն բազմազան նյութեր օրինակ՝ տեսողական, լսողական ,աուդիո, տեսանյութ և այլն:Այսպես, Էդիբբրնը (2007, 2010) ներկայացրել է ուսուցման դժվարություններ ունեցող սովորողներին վերաբերող դեպքեր, ում ուսումնառության արդյունավետությունը բարձրացել է, երբ ուսուցիչները հրաժարվել են դասախոսելու և միայն տպագիր նյութերով դասավանդելու ավանդական ձևից:4.

Նման սովորողների հետ աշխատելիս հատուկ պայմանների և փոփոխություններ մտցնելու կարիքը կարող է նվազել, եթե ուսուցիչը դասը պլանավորելիս ցուցաբերի ճկունություն: Այն դեպքում, երբ սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքները վաղօրոք նկատի են առնվում և մատչելի դասավանդումը

դրվում է դասի պլանավորման հիմքում՝ բոլորը կարողանում են ավելի լավ սովորել։Ուսումնառության համընդհանուր ձևավորման սկզբունքները խարսխված են ուսուցման երեք տեսակների վրա՝ ճանաչողական, ռազմավարական և հուզական, Ճանաչողական ուսուցումը վերաբերում է սովորողի՝ հասկացություններ ճանաչելու և մտապահելու կարողությանը։Սրան սովորաբար նպաստում է ուսուցչի աշխատանքը կամ տեքստի ընթերցումը։Ռազմավարական ուսումնառությունը վերաբերում է որոշակի բովանդակությանը, հասկացություններին արձագանքելու սովորողի կարողությանը կամ հմտություններին։ Ռազմավարական ուսումնառության համար սովորողը պետք է ծանոթանա (ճանաչի) և կարողանա արձագանքել հասկացությանը։Ուսուցման այս տեսակը հաճախ անցկացվում է գրավոր առաջադրանքների կամ դասարանում բանավոր պատասխանելու միջոցով։Հուզական յուրացումը վերաբերում է նյութը յուրացնելու սովորողի մոտիվացիային։Առանց մոտիվացիայի սովորողների կողմից յուրացումը ավելի մակերեսային է։ՈՒՀՁ-ն ունի երեք հիմնական սկզբունք, որը ուսուցիչներին հնարավորություն է տալիս ուսումնական գործընթացը պլանավորելու սովորողների կարիքներին համապատասխան։ՈՒՀՁ սկզբունքները համապատասխանում են մի գաղափարախոսության, որը ողջունում է սովորողների տարբերությունները։Ուսուցիչները կարող են բարելավել իրարից տարբեր սովորողների ուսումնառությունը՝ ճանաչողական, ռազմավարական ուսումնառության բազմազան հնարավորություններ ստեղծելով։Դասավանդման այսօրինակ ճկունությունը բացառում է ուսուցչի կողմից դասախոսություն կարդալու, սովորողների կողմից նշումներ կատարելու (դասախոսությունը գրի առնելու) և վերջապես, անցածի վերաբերյալ քննություններ հանձնելու ավանդական մոտեցումը։Դասախոսության, նշումների, քննության մեթոդը կարող է խոչընդոտ լինել այն սովորողների համար, ովքեր դժվարանում են հասկանալ ուսուցչի խոսքը, գրել կամ մտապահել։ Ավանդական մոտեցումը կարող է նաև խոչընդոտներ առաջացնել այն աշակերտների համար, ովքեր ավելի լավ են սովորում փոխներգործուն միջավայրերում կամ փոքր խմբերում Դասախոսությունները, նշումները և քննությունը կարող են լինել համընդհանուր

ձևավորման մասը, սակայն դրանք դասավանդման ժամանակ կիրառվող բազմաթիվ մեթոդներից ընդամենը մի քանիսն են։

ՈՒՀՁ-ի երեք սկզբունքները հետևյալն են՝

1. Ճանաչողական ուսուցման օժանդակում՝ նյութը ներկայացնելու բազմազան միջոցների կիրառմամբ.

2. Ռազմավարական ուսումնառության օժանդակում՝ արտահայտվելու համար բազմաթիվ հնարավորությունների ընձեռմամբ.

3. Հուզական ուսուցման օժանդակում՝ ներգրավման բազմաթիվ միջոցների կիրառմամբ։ Կրթական գործընթացի հիմքում երբեմն կարող է ընկնել ՈՒՀՁ ոչ թե մեկ, այլ մի քանի սկզբունք, քանի որ ճկուն մոտեցմամբ կազմակերպված դասերը պահանջում են բազմազան միջոցների կիրառում։

- Ճանաչողական ցանց-ուսումնոռություն-<<ինչ>>ը.Նյութի ներկայացման բազմազանության ձևերը.
- Ռազմավարական ցանց-ուսումնառություն<<ինչպես>>ը.Գործելու և գիտելիքների բազմազանության ձևերը.
- Հուզական աֆեկտ-ուսումնառության<< ինչու>>ն.Ներգրավվման ձևերի բազմազանությունը.

Կան դասարանում ՈՒՀՁ-ի իրականացման բազմաթիվ ձևեր։Ուսուցչի կողմից այս կամ այն մոտեցման ընտրությունը կախված է դասարանում սովորողների առանձնահատկություններից և ուսուցանվող նյութի բովանդակությունը։Այս տարբերակումը դասապրոցեսը դարձնում է ավելի հաճելի և իմ փոխադարձ դասալսման ընթացքում ուսուցիչը կարողացավ ճիշտ կառավարել դասաժամը և հասնել իր կողմից նախանշված վերջնարդյունքին։

4.Թադևոսյան Ս. Ներառական կրթության հաջողությունները և նոր մարտահրավերները ՀայաստանիՀանրապետությունում: Ջեկույց: 11 էջ:

Առարկայական մասնախմբերի ստեղծումը որպես ուսուցիչների համագործակցության ու փոխօգնության հարթակ-

Մեթոդական միավորումը ուսումնական հաստատության մեթոդամանկավարժական գործունեության հիմնական կառուցվածքային տարրն է, որն իրականացնում է ուսումնական, դաստիարակչական, մեթոդական և արտադասարանական աշխատանքների համակարգումը դպրոցում: Մեթոդական միավորումների աշխատանքը բազմաբնույթ է: Այն միտված է ուսուցչի մասնագիտական որակների բարձրացմանը՝ խրախուսելով կոլեկտիվում աշխատելու և համագործակցելու վերջինիս ցանկությունը:

Առարկայական մեթոդական միավորման բոլոր անդամներն ունեն հավասարազոր իրավունքներ ու պարտականություններ: Իրենց կատարած աշխատանքով վերջիններս հաշվետու են մեթոդական միավորման նախագահին, ով ի պաշտոնե համակարգում է միավորման աշխատանքները՝ դրանք ամփոփելով միավորման նիստերի ժամանակ: Առարկայական մեթոդական միավորումների նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ: Սահմանված կարգով նիստերն արձանագրվում են : Մանկավարժական այս օղակի գործունեության հենքում մանկավարժական որակների բարձրացումն է: Այստեղ իրականացված բազմաբովանդակ գործառույթները օգնում են ուսուցչին համակարգել իր ողջ մարդկային ներուժը, աշխատանքին մոտենալ ստեղծագործաբար, գնալ նոր ու հետաքրքիր գաղափարների որոնման ճանապարհով: Ուսումնական գործընթացը համակարգվում է, քանի որ մի նպատակի իրագործման համար աշխատում է մանկավարժների ամբողջ մի թիմ, բացառվում է ցանկացած անհատական շահ, բոլորը գործում են՝նպատակ ունենալով համակարգել ուսումնադաստիարակչական գործընթացն ու բարձրացնել սովորողների կրթության որակը:

Ժամանակակից կրթությունն ուղղված է սովորողների մտածողության, մասնագիտական նախաձեռնողականության, ինքնուրույնության զարգացմանը ինչը կապահովի մրցունակ մասնագետի պատրաստումը: Դպրոցի գերխնդիրն է

կոմպետենտ մանկավարժ ունենալը, ով արագ հարմարվում է փոփոխություններին, կրեատիվ է, կողմնորոշվող, անընդհատ թարմացնում և ավելացնում է իր մասնագիտական գիտելիքները:

Բերենք մեթոդական միավորման ներսում ուսուցիչների համագործակցության մի քանի իրավիճակային օրինակներ: Հումանիտար առարկաների մեթոդական միավորման նախագահը մեկ այլ անգլերենի ուսուցչի հետ ներկայանում է սկսնակ ուսուցչի դասին, որպեսզի իրականացնի փոխադարձ դասալսում: Դասալսման նպատակն էր ստուգել սովորողների մասնակցությունը դասին: Արդյունքում արձանագրվում է, որ սովորողների հիմնական մասը դասին պասիվ էր կամ ոչ ուշադիր, այլ խոսքով՝ դասը չէր ծառայում նպատակին, և ուսուցիչը դասի ավարտին չկարողացավ հասնել չափորոշչային պահանջներին: Անշուշտ, պետք է հետևողական լինել, որ արձանագրված խնդիրը ստանա համապատասխան լուծում, ուսուցիչը հասկանա՝որտեղ է իր բացթողումը և իրավիճակը շտկվի: Այդ նպատակով գումարվում է արտահերթ մեթոդական միավորման նիստ՝ սահմանելով հետևյալ օրակարգը.

- Ուսուցիչները պետք է հանդես գան դասի ընթացքում մեթոդների կիրառմանիրենց փորձի մասին մեթոդական զեկույցներով;
- Զեկույցները պետք է ներկայացվեն սահիկաշարի օգնությամբ
- Քննարկման միջոցով պետք է պարզաբանվեն մեթոդների կիրառության առավելություններն ու թերությունները՝ հենվելով կոնկրետ օրինակների վրա;
- Փորձառու ուսուցիչները պետք է ունենան ելույթներ՝ դասի տիպերին, փուլերին վերաբերվող;
- Տեղում պետք է կատարվեն առաջադրանքներ:

Ստացվեց, որ մեթոդական միավորման նախագահը, պահպանելով մանկավարժական էթիկան, խնդրին տվեց համակարգային լուծում: Անշուշտ, կոնկրետ ուսուցիչը ծանոթացավ դասալսումների մատյանում արված արձանագրությանը, միավորման նախագահի հետ քննարկեց, վերլուծեց իր բացթողումները:

Ուսումնասիրելով հիմնախնդիրը՝ եկանք եզրակացության, որ ուսուցչի մասնագիտական կոմպետենտության զարգացումն արդի կրթական պահանջների արտացոլանքն է, որում մանկավարժական կոմպետենտությունը սահմանվում է որպես ուսուցչի գիտելիքների, կարողությունների, իրազեկությունների և մասնագիտական պատրաստվածության մակարդակ, ինչը հնարավորություն է տալիս արդյունավետորեն գործել փոփոխվող սոցիալական, մշակութային և մասնագիտական իրավիճակներում: Ինչպես նաև արձանագրեցինք, որ ուսուցչի մասնագիտական որակների բարձրացման համար անգնահատելի է համագործակցությունը գործընկերների հետ՝ ինչպես ուղիղ, այնպես է առարկայական մասնախմբերի աշխատանքների շրջանակներում:Կարծում ենք, որ աշխատանքի ուսումնասիրության ընթացքում զանազան ձեռնարկների ուսումնասիրությունը թույլ կտա մեզ էլ ավելի համակողմանի պատկերացնել հետազոտության թեմայի արդիականությունը, դրանից բխող խնդիրները: Կարծում ենք՝ որ աշխատանքը կծառայի իր նպատակին՝դառնալով մեզ համար առիթ՝ գործընկերների հետ ակտիվ համագործակցային հարաբերություններն էլ ավելի ամրացնելու համար:

Համացանցային մանկավարժական համայնքների ձևավորումը, որպես մանկավարժական փորձի փոխանակման միջոց.

Այժմյան իրողությունը սոցիալ-տնտեսական իրավիճակը բնութագրվում է նրանով, որ մարդկային գործունեության բազմաթիվ ոլորտներ, այդ թվում՝ կրթությունը, սրընթաց զարգանում են տարբեր նորարարությունների ներդրման շնորհիվ: Այս իրավիճակում հայտնված անձը պետք է լինի ոչ միայն դրանց իրականացման գործում կատարող, այլև նորարարական գործընթացների անմիջական ստեղծող:Այսօր ուսուցչից պահանջվում է «պատրաստ լինել ադեկվատ կերպով դիմավորելու յուրաքանչյուր մասնագիտական իրավիճակ, պատրաստ լինել վերապատրաստման արագ փոփոխվող միջավայրում»: Դպրոցում սովորողների կրթական և ճանաչողական գործընթացի ուսուցչի կառավարման արդյունավետության խնդիրը կարող է լուծվել միայն յուրաքանչյուր ուսուցչի բարձր կոմպետենտության և համապատասխան մասնագիտական կարողությունների ապահովման դեպքում:Ուսուցչի ժամանակակից ինքնակրթությունը, նրա որակավորման բարձրացումը և մանկավարժական փորձի փոխանակումը պետք է անցնեն ցանցային մանկավարժական համայնքներով: Մանկավարժական համայնքի ներդրումը համացանցային եղանակով ունի ամենապարզ մոտեցումները: Համայնքի ձևավորման և գոյության համար մեծ նշանակություն ունեն հետևյալ հատկանիշները.

- Ընդհանուր նպատակներ, հետաքրքրություններ և կարիքներ:
- Համօգտագործվող ռեսուրսներ, որոնց հասանելի են համայնքի անդամները.
- Ընդհանուր համատեքստը և հաղորդակցության լեզուն, որոնցում ընկղմված են համայնքի անդամները:

Առցանց համայնքը մարդկանց խումբ է, ովքեր հաղորդակցվում և համատեղ գործունեություն են իրականացնում՝ օգտագործելով համակարգչային ցանցի հնարավորությունները: Համակարգչային ցանցը (Ինտերնետ), փաստաթղթային ցանցը (World Wide Web) և ծրագրային ապահովումը (սոցիալական ծառայություններ) կապում են ոչ միայն համակարգիչներին և փաստաթղթերին,

այլև մարդկանց, ովքեր օգտագործում են այդ համակարգիչները, փաստաթղթերը և ծառայությունները: Ցանցային մանկավարժական համայնքը մարդկանց խումբ է, ովքեր հաղորդակցվում և համատեղ մանկավարժական գործունեություն են իրականացնում համակարգչային ցանցային գործիքների միջոցով: Ցանցի աջակցությունը նոր հնարավորություններ է բացում համայնքների համար՝ ներկայացնելու իրենց թվային արխիվները և ներգրավելու նոր անդամներ: Համակարգչային տեխնոլոգիաների զարգացման հետ մեկտեղ գիտելիքի փոխանակման համայնքներն ունեն գիտելիքների պահպանման նոր ձևեր և նոր ծրագրային ծառայություններ, որոնք հեշտացնում են գիտելիքների կառավարումը և այդ գիտելիքների օգտագործումը համայնքի ծայրամասում գտնվող նորեկների կողմից: Ցանցային համայնքը մանկավարժական պրակտիկայի համար բացում է հետևյալ հնարավորությունները.

1) բաց, անվճար և անվճար էլեկտրոնային ռեսուրսների օգտագործումը.

2) ցանցային կրթական բովանդակության ինքնուրույն ստեղծում. 3)տեղեկատվական հասկացությունների, գիտելիքների և հմտությունների զարգացում.

4) պրակտիկայի համայնքի անդամների գործունեության մոնիտորինգ. Ցանցային մանկավարժական համայնքը ռեսուրս է, որը ստեղծված է համախոհների, մեր երկրի տարբեր մարզերի ուսուցիչների, ուսուցիչների շփման համար, ովքեր ցանկանում են կիսվել իրենց փորձով, վիճել, պատմել իրենց մասին և ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն:

- Համայնքի նպատակները. - մանկավարժական փորձի փոխանակում.
- Հաղորդակցություն տարբեր տարածաշրջանների գործընկերների հետ.
- Վերապատրաստում - նոր գիտելիքների ձեռքբերում.
- Նշաններ՝ համախոհների թիմ:
- Տեսակների ձևավորում
- Մոնոառարկա, բազմառարկայական, վերառարկայական.

Հեռավար ուսուցում համայնքում - հաղորդակցություն ֆորումներում, զրույցներում, վեբ էջերի ստեղծում և այլն: Ցանցային մանկավարժական համայնքներում կիրառվում են գործունեության հետևյալ ձևերը.

- Վերապատրաստման սեմինար
- Վիրտուալ կոնֆերանս
- Մրցույթ, Նախագիծ, Վիրտուալ երեկույթ, «Աշխատաժողով» կամ վարպետության դաս
- Հարցազրույց ,զրույցի քննարկում .
- Կոնֆերանս ցանցային մանկավարժական համայնքներում հնարավոր է աջակցել գործունեությանը՝ օգտագործելով հետևյալ միջոցները.

Ձևերը կարող են ինտեգրվել: Օրինակ՝ բլոգը կարող է լինել ոչ միայն տեքստ, այլ նաև թույլ է տալիս մեկնաբանություններում ավելացնել լուսանկարների պատկերասրահներ՝ քվեարկելու հնարավորությամբ: Ցանցում անհրաժեշտություն կար ստեղծել այնպիսի տարածք, որը ուսուցիչներին հնարավորություն կտար գտնել իրենց հուզող մասնագիտական բազմաթիվ հարցերի պատասխանները, ցույց տալ իրենց գործունեությունը և կատարելագործել իրենց մասնագիտական պատրաստվածությունը: Այս համայնքի հիմնական նպատակը պետք է լինի ուսուցիչներին պատրաստել ցանցում մասնագիտական գործունեությանը: Ուսուցիչները կարող են առաջարկություններ գտնել ցանցում հնարավոր գործողությունների, ցանցում տարբեր միջոցառումներին մասնակցելու կամ անցկացնելու մեթոդական մշակումների վերաբերյալ (նախագծեր, մրցույթներ, կոնֆերանսներ, ֆորումներ և այլն): Ամենակարևոր գործոններից մեկն այն է, որ մասնագիտական ցանցային համայնքների անդամները հնարավորություն ունեն ձեռք բերելու նոր գիտելիքներ իրենց մասնագիտության ոլորտում՝ դրանով իսկ բարձրացնելով իրենց մասնագիտական կարողությունների մակարդակը: Սա ոչ այլ ինչ է, քան ցմահ ուսուցման օրինակ,որը կիրառելի է հարափոփոխ աշխարհում:

Եզրակացություն

Խելացի մարդը բոլոր սխալները միայնակ չի կատարի: Նա հնարավորություն կտա նաև ուրիշներին:

Ես միշտ պատրաստ եմ սովորել, սակայն ինձ ոչ միշտ է դուր գալիս, երբ ինձ սովորեցնում են:

Ուինսթոն Չերչիլ. Պրոֆեսիոնալիզմի հիմնական հատկանիշներից մեկը շարունակական ինքնազարգացման պահանջարկն է:

Հետազոտության ենթակա նյութի ուսումնասիրության շրջանակներում կատարեցի հետևյալ արձանագրումները:

• Կրթության որակի բարելավումը պահանջում է, որ ուսուցիչն ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրատվածություն, համապատասխան մասնագիտական և անձնային որակներ, որոց զարգացմանը մեծապես կարող է օժանդակել գործընկերների հետ համագործակցությունը:Սակայն, ինքնազարգացման ուղիները և միջոցները անհատական են, պայմանավորված մեզանից յուրաքանչյուրի անհատական հատկանիշներով և կարիքներով: Մասնագիտական զարգացումը ենթադրում է ուսուցիչների գործունեության բարելավում, ինչին կարելի է հասնել լավ պլանավորված և խելամտորեն իրականացված միջոցառումներով ինչպես անհատական, այնպես էլ կազմակերպչական մակարդակում: Իմ հետազոտական աշխատանքում գալիս եմ ընդհանուր եզրահանգման, որ ուսուցիչը իր մասնագիտական աճը պետք է պլանավորի ամեն օր բաց լինի նորամուծությունների առջև,պատրաստակամ լինի սովորելու,մոտիվացվի, նորամուծությունները հեշտությանբ կարողանա սովորել, կիրառել և՛ 22-րդ դարի հմտություններին համահունչ դասեր: Սովորողներին ավանդական դասապրոցեսից բերի դեպի ակտիվ աշակերտի լինի ուղղորդող,առարկայական և՛ կյանքի հմտությունները աշակերտին մատչելի ձևով սովորեցնելու գործընթացում լինի անկաշկանդ: Մեր գործող օրենսդրությունն էլ որոշակի կարգավորում է տալիս ուսուցիչների փորձի փոխանակման գործընթացին: Ուսուցչական մանկավարժական խորհրդի նիստերում

յուրաքանչյուր ուսումնական տարի ուսուցիչները պետք նվազագույնը մեկ զեկույցով հանդես գան իրենց մասնագիտական խմբի ուսուցիչներին ներկայացնելով կամ իրենց կատարած հետազոտությունները, կամ էլ առաջավոր մանկավարժական փորձառությունը:

Առաջարկություն

Առաջարկություններ ուսուցիչներին

• Հետամուտ լինել և ստանալ խորքային տեղեկատվության վերապատրաստող կառույցների ընտրության ժամանակ կառույցի փորձի վերաբերյալ:

• Նախաձեռնել փոխադարձ դասալսումներ, մասնագիտական քննարկումներ,բաց դասեր, միջոցառումներ,զեկույցներով հանդես գալ տարբեր համայնքների ուսուցիչների հետ,կազմակերպել կոնֆերանսներ թեկուզ զում հանդիպումներ թորձի օրինակներով հանդես գալ ինչու չէ օգտվել Աշխարհացույց կրթկան հարթակից որտեղ ուսուցիչները հանդես են գալիս իրենց փորձով և կիսվում են սկսնակների ,փորձառուների հետ ստանալով նաև նոր մտքեր հետադարձ կապ,սովորել սովորեցնելու մեթոդը շատ կիրառելի է:

• Ներկայացնել և քննարկումներ ծավալել առարկայական մեթոդական միավորումների շրջանակներում հաջողված/ձախողված փորձի վերաբերյալ:

• Մշակել և իրականացնել սեփական կրթական կարիքներին ուղղված մասնագիտական զարգացման ծրագիր՝ գործընկերային ուսուցման (peer learning) սկզբունքի հիման վրա:

Գրականության ցանկ

1.Թադևոսյան Ս. Ներառական կրթության հաջողությունները և նոր մարտահրավերները Հայաստանի Հանրապետությունում: Ջեկույց: 11 էջ:

2.Ժ.Գ.00.01.«Մանկավարժական տեսություն և պատմություն».Ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման ժամանակակից տեխնոլոգիաներում.Հեղինակ՝ ԲԱդդասարյան Լիլիթ Գագիկի, Երևան -2013թ:

3.https://aspu.am/website/images/old/upload/file/Hayecakargh.pdf
ՀՊՄՀ,Մանկավարժական կրթության զարգացման հայեցակարգ, Երևան, 2014, էջ11:

4. https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀհանրակրթության մասին օրենք: